Ապրիլի 25-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը՝ ՀՖՖ Կարգապահական կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանի նախագահությամբ՝

ՈՐՈՇՎԵՑ՝

Արտոնագրման փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը խախտելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝
1.1 «Ուլիս» ֆուտբոլային ակումբին տուգանել 400000 դրամ:
1.2. «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել 400000 դրամ:

17/04/13թ. «Փյունիկ-Մրգաշատ-97»-«Լ.Արցախ-97» խաղին «Փյունիկ-Մրգաշատ-97» թիմի ֆուտբոլիստ Միքայել Իսկանդարյանի հեռացման, մրցավարի նկատմամբ վիրավորական արտահայտության համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ որակազրկել 4 խաղով, «Փյունիկ» ֆուտբոլային ակումբին տուգանել 20000 դրամ:

19/04/13թ. «Բանանց-1-98»-«Շիրակ-98» խաղին «Բանանց-1-98» թիմի մարզիչ Անդվիլ Խերթի հեռացման, մրցավարի գործողություններին միջամտելու և հայհոյելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ որակազրկել 4 խաղով, «Բանանց» ֆուտբոլային ակումբին տուգանել 20000 դրամ:

17/04/13թ. «Գանձասար-97»-«ԽՄՕՄՄ-97» խաղը չկայանալու «ԽՄՕՄՄ-97» թիմի չներկայանալու պատճառով, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «ԽՄՕՄՄ-97» թիմին գրանցել տեխնիկական պարտություն, ԽՄՕՄ մարզադպրոցին տուգանել 100000 դրամ:

17/04/13թ. «Գուգարաց-98»-«Փյունիկ-1-98» խաղը վերախաղարկել:

17/04/13թ. «Ադանա-98»-«Փյունիկ-2-98» խաղին «Ադանա-98» թիմի մարզիչ Գագիկ Մովսիսյանի անվայել պահվածքի, մրցավարի հասցեին հայհոյանքի համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ որակազրկել 8 խաղով, Չարենցավանի մանկապատանեկան մարզադպրոցին տուգանել 40000 դրամ:

18/04/13թ. «Շիրակ-96»-«Փյունիկ-96» խաղը վերախաղարկել:

(14Բ110) խաղին «Թխաձոր-99» թիմի կազմում չգրանցված ֆուտբոլիստ մասնակցելու համար, ՀՖՖ-ի մանկապատանեկան մրցումների անցկացման կանոնակարգի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Բենդավանի գյուղապետարանին տուգանել 3000 դրամ:

21/04/13թ. «Գյումրի-ֆզ»-«Շահումյան-ֆզ» խաղին «Գյումրի-ֆզ» թիմի ֆուտբոլիստ Աշոտ Խաչատրյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 20-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Գյումրի-Անի» հասարակական կազմակերպությանը տուգանել 7000 դրամ:

21/04/13թ. «Գյումրի-ֆզ»-«Շահումյան-ֆզ» խաղին «Շահումյան-ֆզ» թիմի կազմում որակազրկված ֆուտբոլիստ (Հենրիկ Գրիգորյանի) մասնակցելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 20-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ «Շահումյան-ֆզ» թիմին գրանցել տեխնիկական պարտություն, Շահումյան ֆուտբոլային ակումբ հասարակական կազմակերպություն ակումբին տուգանել 50000 դրամ:

21/04/13թ. «Ավան ԵԿՄ-97»-«Թալգրիգ-2-97-ֆզ» խաղը չկայանալու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 20-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ «Ավան ԵԿՄ-97» թիմին գրանցել տեխնիկական պարտություն, «ՀՀ երկրապահ կամավոր միություն Երևան ավանի տարածքային բաժանմունքին» տուգանել 10000 դրամ:

18/04/13թ. «Թալգրիգ-ֆզ»-«Պոլիտեխնիկ» խաղին «Թալգրիգ-ֆզ» թիմի ֆուտբոլիստ Ջանիբեկ Եգանյանի մրցավարին հայհոյելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 21-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ որակազրկել 5 խաղով, «Թալ-Գրիգ» ՍՊԸ-ին տուգանել 100000 դրամ: